# ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՆՎԵՐ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Վեհափառ Հայրապետը վերջերս ուրախությունն ունեցավ ստանալու Եթովպիայի կայսր Հայլե Սելասիեի հրամանով և հովանավորությամբ կատարված և նրա կայսերական ստորագրությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածին նվեր ուղարկված Աստվածաշնչի ամհարերեն թարգմանության նոր հրատարակությունը:



ՀԱՅԼԵ ՍԵԼԱՍԻԵ ԿԱՅՍԵՐ ՋՈՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Այս ուրախ առիթով, բարեպաշտ Կայսեր ուղղված նոյեմբեր 29 թվակիր Իր օրհնության և ողջույնի թղթում Վեհափառ Հայրապետը գրում է.

«Քաղցր հուզումով ստացանք Ձեր սուրբ ընծան՝ Աստվածաշունչ Մատյանը ամհարական լեզվով, լույս տեսած Ձեր բարձր հրամանով և հովանավորությամբ, զոր Մեր սեղանի վրա պիտի պահենք միշտ և Մեր սրտին մոտիկ, իբրև խորհրդանշան Ձեր ազնիվ զգացումներուն դեպի մեր Սուրբ Աթոռը և սիրո հարաբերություններուն մեր երկու քույր Եկեղեցիներուն միջև, որոնք երկար դարեր շարունակ Քրիստոսի լույսը վառ են պահեր Արևելքի սահմաններուն վրա, հաճախ իրենց մարմնի նահատակության իսկ գնով:

Շնորհակալություն Ձերդ Վեհափառության:

Հայ ժողովուրդի սուրբ հավատքի բազմադարյան կեդրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնեն ջերմապես կաղոթենք առ Աստված Ձեր կյանքին արևշատության, Ձեր Եկեղեցիին ծաղկումին և Ձեր բարի և չարքաշ ժողովուրդին բարօրության և երջանկության համար, Ձերդ Վեհափառության հայրական ապահով հովանիին ներքև:

Թող միշտ խաղաղ, միշտ արևոտ և միշտ պտղառատ մնա Ձեր երկիրը:

Կաղոթենք նաև, որ Տիրոջ ողորմությամբ հետզհետե առավել ջերմանան սիրո և եղբայրության կապերը մեր երկու քույր Եկեղեցիներու և մեր երկու ժողովուրդներու միջև:

«ՈՒՂԻՂ ԵՂԻՑԻՆ ԱՂՕԹՔ ԻՄ ՈՐՊԷՍ ԽՈՒՆԿ ԱՌԱՋԻ ՔՈ, ՏԷՐ» (Սաղմ. ճխԱ 2):

«ՍԷՐ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՂԻՑԻՆ ԸՆԴ ՁԵԶ ԱՅԺՄ ԵՒ ՅԱՒԻՏԵԱՆ»:

ԱՄԷՆ»: